

դարձի հանդիսի նշանակումը, յիշեցուցանելով Տ. Տ. Գէորգայ Գ Սրբազնազոյն Կաթողիկոսի ազգասիրական զործքերն իւր տասնամեայ Հայրապետութեան ժամանակն. եւ ապա արձակեաց աշակերտս եւ աշակերտուհիս ի պատիւ մեծահանդէս տօնին:

Յերեկոյն կատարեցաւ լուսավառութեան մեծ հանդէս քաղաքիս Ս. Գէորգ աւագ եկեղեցումն:

Ռ. ԵՐԶՆԵՆԱՆՅ ՀԱՂԱՏԵՏԻ.

Ահաւասիկ ընթերցեալ ճառը:

ԱՍՏՈՒԱԾԱՍԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ.

Ի մեծահանդէս աւուր տօնիս ինձ միմիայն այժմ վիճակեցաւ ելանել ի հանդէս բանաստեղծեան առ ի շնորհաւորել ընդ Ձեզ զտասնամեայ Տարեդարձն Օծութեան ի Կաթողիկոսութիւն Հայոց մեծաց Տ. Տ. Գէորգայ Գ. Սրբազնակատար Քահանայապետի, բազմելոյ ի Գահ Սրբազան առաքելոցն Թաղդէի եւ Բարդուղիմեայ, եւ մերս սուրբ Լուսաւորչի մեծին Գրիգորի Պարթեւի: Ներեսցի ինձ այժմ ոչ լիակատար, այլ համառօտ բանիւր յիշեցուցանել Ձեզ զկատարեալ մինչեւ ցարդ գործոց մերս Հոգեւոր Քահանայապետի, զորոյ տասնամեայ յաջող տարեդարձն տօնեմք ընդ Ձեզ ի մէջ սուրբ Տաճարիս մեծաւ հանդիսավեհութեամբ:

Նախախնամութիւնն ի սկզբանէ մինչեւ ցարդ պահեալ պահպանել զՔրիստոսանիմն ուղղափառ եկեղեցի մեր, յարուցանելով քաջարժուն եւ անձնադիր Հովիւս վասն յառաջադիմութեան ազգիս եւ բարեկարգութեան սրբոյ եկեղեցւոյ:

Տօրէ զահակալութեան իւրոյ, Սրբազնակատար Հայրապետն Ազգիս Գէորգ Գ, որպէս քաջ Հովիւ եղեալ զանձն իւր ի վերայ բանաւոր Հօտի իւրոյ, եւ որպէս Ժիր մշակ անպարտելի Կաթողիկէ եկեղեցւոյ քաջարժնութեամբ հսկեալ եւ ցարդ հսկէ ի շինութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ի պաշտպանութիւն ուղիղ հաւատոյս նմանապէս անքուն ակամբ եւ ազգասիրական հոգւով պարտաւորեալ միշտ բարեկարգել բանալ զուսումնարանս ընդ ամենայն տեղիս Հայաստանի, եւ զառաջուց հիմնարկեալսն՝ որպիսի մարմ է՝ զո՞ն գործէ՝ դիւրին միջոցաւ պահպանել եւ կանոնաւորել, եւ նո-

վաւ բանալ ճանապարհ լուսաւորութեան եւ յառաջընթացութեան ապագայ սերնդոց մերոց, ծնանիլ բարեջան անդամս ազգիս, պահպանել զկարգ եւ զկանոն յեկեղեցիս ի հոգեւորականս եւ ի Ժողովրդականս:

Մարգարէն Դաւիթ իրեւ ընտրեցաւ յԱստուծոյ ի թաղաւոր, եւ օծաւ իւղով սրբով, ասէ բանն Աստուածային, Թէ՛ « Հա՛նգէ՛ւ հա՛նգէ՛ւ Տէ՛ւն է Ժէ՛ւ, Դա՛ւիթ, յա՛նգէ՛ւ յա՛նգէ՛ւ Լա՛ւ յա՛նգէ՛ւ »: Եւ այժմ չեղեն ընդունայն բողո՞մանք ուսմանայն Հայոց, չեղին ի դերեւ խնդրուածք ողջոյն եկեղեցւոյ, զի ամենօրհնեալն Աստուած բարձրացոյց զեղջիւր Օծելոյ իւրոյ: Այն սուրբ Հոգին անապաւ եւ անդադար խաղաց ի վերայ Աստուածընտիր Քահանայապետիս մերոյ, եւ շնորհիւ այնք Հոգւոյ հանապազ Նա մատակարարէ մեզ ամենեցունցս հոգիի դիտութեան, հոգիի հեղութեան եւ աստուածպաշտութեան:

Յաւուրս տասնամեայ Հայրապետութեան սորա բացան երկուց սեռից ուսումնարանք ի դաւառս՝ ի նահանգս եւ ի դիւղօրայս Հայաստանի: Աթոռապատկան զանազան շինութիւնքն են կենդանի վկայք խնամատարութեանց Վեհափառին մերոյ: Տպարանն Սրբոյ Էջմիածնի պաշտօնացեալ ծաղկեցաւ, եւ հետզհետէ հին եւ ընտիր մատենադրութիւնք ի լոյս ընծայեցան: Լուսաշաղի Արարատ ամապղիրն ի սկզբանէ մինչեւ ցայսօր տարփողէ յականջս Հայկազանց զաղափարս ուսման եւ յառաջադիմութեան: Օծեալն յԱստուծոյ Վեհափառ Կաթողիկոսն մեր Գէորգ Գ, ի Սիօնի Սրբոյ Էջմիածնի կանգնեալ, զորշմեալ ունի ի վեհ ճակատ իւր զազաջէն գործս, եւ բարի նպատակաւ կատարեալգործէ օր ըստ օրէ զսկզբնաւորեալս յօդուտ ազգիս. ի սուրբ երեսաց նորա ելանեն մեզ իրաւունք, եւ աչք մեր տեսանեն զուղղութիւն: Օրինակի համար: Նորակառոյց Գէորգեան ճեմարանն Մայր Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի են հրաշալի սխրագործութիւնք Նորին, իւր բարի նպատակաւ: Այս ճեմարան ես ամենայն իրաւամբ նմանեցուցանեմ արեղական, որ յարեւելից ելեալ տարածանելոց է զփայլուն ճառագայթս իւր մինչեւ ցօլորտս տիեզերաց: Այս պատճառաւ ես սուրբ սրտիւ բարձրացուցեալ զծեռս իմ ընդ Ձեզ ո՞վ բազմականք՝ աղաղակեմ ասելով « Կեցցէ՛ արթուն

Հիմնադիրն Հայկազեան Հեմարանի եւ մի շարժեցիկ միջեւ փառաւորապէս զառաջս ունիցի ամենայն ակնունելի արդելանաց: Այսուհետեւ թող փայլեցի ծիածանն Արարատեան ի նշան բարւոյ, եւ աղանկն Նոյեան տապանի շիւղ ի բերան թռուցեալ յարեւելից յարեւմուտս քարոզեցէ ջախջախել զգրուի վիշապին տղիտութեան: Ես չեմ կարող մի առ մի բացատրել՝ ո՞վ բազմականք, զսկսեալ եւ դեռ եւս զսկսանելի սիրազործութիւնս Վեհափառ Հօրն մերոյ, այլ թողումս պատմաբանից՝ իւր ժամանակին ապա, «**ԿԵՅԳԷ ԿԵՅԳԷ**» դրօշմել զանուն եւ զմեծագործութիւնս նորա, որ ջանայ զոհել զանձն իւր վասն բարեկարգութեան եւ բարոյական փրկութեան Հայկական ազգիս:

Ի վերջոյ դարձուցեալ զերեսս իմ յԱթոռ ամենաբարձրելոյն Աստուծոյ թափօրական մաղթանօք համախմբեալ զասիւրք միաբան քահանայիցս ընդ շրանշան պաշտօնաւորացոյ, մեծարու քաղաքացւոցոյ, արհեստապետ եւ արհեստաւոր ժողովրդականացոյ, ընդ աւագ եւ կրտսեր վարժապետացոյ հանդերձ աշակերտօքս եւ աշակերտուհեօքս վերառաքեալ զճերմագին պաղատանս յաթոռ յաւիտենականին Աստուծոյ կնքեմ զբանս ասելով «**Թագաւոր երկնաւոր, հաստատեան զաթոռ ինքնակալ Կայսեր մերոյ Աղէքսանդրի Բ. պահպանեան Տէր զհայրախնամ փոխարքայն մեր մեծ Իշխան Միխայել Նիկողայելի, օրհնեան տէր եւ զամենեւեանս, որք ածնեցաք ի մէջ տաճարիս հանդէս տասնամեայ Օծութեան Նորին Վեհափառութեան:**

Միաբան ասացո՞ւք ի միասին՝ «**Կեցցէ Վեհափառ Կաթողիկոսն մեր երկար կենօք վասն կատարելագործելոյ զսկսեալ ազգաշահ գործս իւր, հաստատուն պահել զՄայր Աթոռն մեր Ս. Էջմիածին, եւ առ ի մի յօդ զուգիւր զգրուեալ ազգ մեր: Կեցցէ ընտիր Քահանայապետն մեր եւ Նաւապետն բարի առ ի հասուցանել զգինուորեալ Եկեղեցիս իւր ի նաւահանգիստն յաւիտենական երջանկութեան. ամէն:**

ԳԵՌԳԵ Ա. ՔԱՀ. Տ. ՍԱՐԳՍԵԱՆՑ.

ՅԱԽԱՆՅԵԱՅԷ.

ԽԶՄԻՐՆԷԱՆ ԱՐԱՐԱՏ ԿԵՅԳԷ.

Թեմական վերադասութիւն միջնակարգ եւ ծխական Դպրոցաց վիճակին Հայոց Վրաստանի եւ Իմէրէթի Ազնուամեծար Պ. Յակովբ Տէր Յովհաննէսեանցն պաշտօնական գրութեամբ ի 44-ն ամսոյս, ընդ համարաւ 67, առաջարկած էր որպէս Հոգաբարձութեանս, նոյնպէս եւ իւր օգնական Պ. Մովսէս Սամուէլեանցին՝ Վեհափառ Կաթողիկոսի Օծման տասներորդ տարեդարձի մասին ազատել ուսումից աշակերտաց եւ աշակերտուհեաց Ախալցխոյ բոլոր Հայոց ուսումնարանաց՝ ժողովել զնոսա եւ տանել Եկեղեցի՝ Ս. Պատարագին բոլոր ուսուցչաց հետ ի միասին. իսկ պատարագէն ետք՝ վերադառնալ կրկին ուսումնարան, եւ բացատրել նոցա այն օրուայ հանդիսի նշանակութիւնը: Եւ ահա, այս առթիւ, մեր եւս որպէս անդամ «**Նոր — արշալոյս**» վարժարանի հոգաբարձութեան՝ ի դիմաց աշակերտուհեաց՝ յօրինած էինք մի ներբող. զոր եւ ընթերցաւ ուսումնարանի մէջ առաջի հանդիսականաց՝ առաջին աշակերտուհի Դշխուհի Տէր Գրիգորեանցն. ներբողէն ետք՝ հիմնադիրն «**Նոր արշալոյս**» Մեծապատիւ Պ. Ռաֆայէլ Սաղաթիլեանց՝ սկսաւ բացատրել աշակերտուհեաց Վեհափառ Կաթողիկոսի ազգասիրական գործերը, եւ ներբողի մէջ պարունակուած խորհրդաւոր մտքերն մեկնել. որոյ ամեն մէկ տողերէն պարզօրէն կնկատուի մեր սրտի անկեղծ զգացմունքներն եւ դիտողութիւնը՝ Վեհափառ Կաթողիկոսի ազգասիրական եւ ուսումնասիրական վսեմ գործոց վրայ հիմնաւորուած. բայց այս հանդէսէն յառաջ՝ այս ինքն նախ բան Եկեղեցի գնալն, Տեսչի օգնական վերոյիշեալ Պ. Սամուէլեանցն՝ որովհետեւ դիտէր որ չէր կարող ներկայ լինել մեր հանդիսին՝ Կարապետեան եւ Եղիսարեթեան ուսումնարաններու վերայ հսկողութիւն անկուն պատճառաւ, ուստի՝ ազգու եղանակաւ մը եւ հօնով՝ սկսաւ հրաւեր մը կարդալ աշակերտուհեաց՝ հանդիսաւոր անկու Վեհափառի Օծման տասներորդ տարեդարձն:

ԵԴԻՇԷ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԵՆԱՏՈՐԵԱՆՑ.

ԱՆՀԱՆԱՍԻԿ յիշատակեալ ուղերձը: